

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

№ 6. 1909. «Գեղունի»—Illustration Arménienne» Pour les orphelins arméniens de Cilicie. մեծագիր, 84 երեսից բաղկացած մի գիրք է ընտիր թղթի վերայ տպուած շատ գեղեցիկ պատկերներով, որ ապացուցանում է, թէ Մխիթարեան հարջ ապրելով Եւրոպայում՝ գլխեն լաւապէս օգտուել էւրոպայի տպագրական կատարելագործութիւնից:

«Գեղունի»ի պատկերները ներկայացնում են մեր պատմական անցեալն ու ներկան, և ընդհանուր համաշխարհային նկարչութեան ու գեղարուեստի նմուշները: «Գեղունի» մի «ընտիր հաւաքածու» է, ուր գետեղուած են հայ և օտարազգի նշանաւոր գրողների մտքերը և վրձինի լաւագոյն արտայայտութիւնները հայ և օտար լեզուներով, ֆրանսերէն և իտալերէն:

ԺԹ.— դարը հայերի նահատակութեան և արտագաղթի դար կարող է համարուել Տաճկաստանի հայերի համար. Ի. դարը, կարծւում էր, որ հանդուստութիւն և ապահովութիւն կը բերի հայերին. սակայն զժգաղգաբար անցեալ 1909 թուին Չատակիան տօներին, երբ հայք նոր սահմանադրական կարգերով կառավարուող երկրում առաջին անգամ ուրախ և համարձակ պէտք է տօնէին քրիստոնէական ամենամեծ տօնը, ուրախութիւնը սուգի և դառն արտասունքի փոխուեց. թուրք կատաղի ամբոխը քաջալերուած հին- ըննակալական կարգերին հակամէտ պաշտօնեաներից, հոգեւորականներից և առաջաւորներից մի սոսկալի եղեռն սկսեց, կոտորելով Կիլիկիայի հայերին և աւերելով ինչ որ հայկական է. և այս այն ժամանակ, երբ ամենամեծ ըննակալ Արդիւլ Համիդ Բ. Սուլթանը գահընկեց էր լինում և ամենասահմանադրական Մէհմէդ Ռաշիդ բարձրանում էր Օսմանեան գահը:

20,000 հայեր կոտորուեցին. նրանց աները, ինչքն ու ստացուածքները մոխիր դարձան. կոտորուած հայերի այրիները իրանց որբուկների հետ մնացին անաէր, անորդ, անտուն, և պատառ հացի կարօտ:

Այրիների արտասուքը սրբելով, որբուկներին մի կտոր հաց և պատուպարան հայթայթելու համար ամեն մի զգայուն սիրտ արեց, ինչ կարողացաւ և անում է. և ահա Վենետիկի Մխիթարեան հարջ, իրրւն մի հատուած հայութեան, կամենալով իրանց լուծան ևս ձգել գթութեան և մարդասիրութեան գանձանակի մէջ, գեղեցիկը միացրին օգտակարի հետ և հրատարա-

կեցին «Գեղունիի» № 6. որ կարող է ամենանուրբ և գեղարուեստորէն զարգացած ճաշակին բաւարարութիւն տալ: «Գեղունի»-ի մէջ ուշագրաւ է Վեհափառ Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսի կոչը—«Կոչ առ պատուական Հայազնեայո»․ որի մէջ Նորին Սրբութիւնը գրում է. «Հայոց պատուական զաւակները՝ այդ ամենադառն տառապանքին մատնուածներու ազիւ արտասուքը սրբելու, անոնց անհրաժեշտ պէտքերն յանձանձելու և որբերու կացութիւնը դարմանելու՝ կանուխէն ձեռնարկած են:

Հաւատարի եմ, որ արեան հեղեղներու մէջ խեղդուած Աղանայի և անոր մնացորդ զաւակներուն պղնկաուր կացութեան օգնութիւնն ողորմասիրական բարձր ոգւով մը կը շարունակեն այն սիրով և եռանդեամբ, ինչպէս արժան է հայ սրտին, հայ զգացման հայ պարտականութեան կատարման»․ . .

Մխիթարեան հարբ, որ ամեն բանում փառիկանկատ են, պէտք է որ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի այս կոչով սկսէին «Գեղունի»:

Յանձնարարում ենք, որ զգայուն և նրբաճաշակ հայերն ունենան Գեղունին. նա իւր ընտիր յօդուածներով, գեղեցիկ պատկերներով մեծ հաճոյք կը պատճառի ընթերցողներին և կծառայի նրանց սեղանին որպէս զարդ, իսկ նրան, որպէս գին, ղճարուած 4 ռուբլի Կիլիկիայի որբերի արտասուքը սրբելու գումարի մէջ կմանի:

Յ. Ա. Ե.

Ստացուած գրքեր.

Ա. «Գեղունի» 1909 Վենետիկ Ս. Ղազար. Թիւ 6. Կիլիկիայի հայ որբերի համար. Illustration Arménienne pour les orphelins arméniens de Cilicie.

Գինն է Ռուսաստանում 4 ռուբլի:

Բ. Հաշիւ Նոր-Նախիջևանի հայազգի աղքատաց եկեղեցական հոգաբարձութեան 1909 Թ. գործունէութեան:

Նոր Նախիջևան. 1910:

Գ. Դատագիրք ընագիտութեան Ա. տարի: կազմեցին Յ. Տ. Մարտիրոսեան Ռ. Օհանջանեան. Երևան 1910 Թ. գինն է 30 կ.